**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

**№ԱԴ/23. 3/11235-2026**

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի
ղեկավար Ա. Ստեփանյանին

*Ի պատասխան Ձեր 13.03.2026թ.*
*թիվ 289 գրության*

Հարգելի՛ պարոն Ստեփանյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության **02.11.2023թ. N 1890-Ն** որոշման առաջին կետով հաստատված հավելվածի **25-րդ** և **26-րդ** կետերով նախատեսված կարգավորումները՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն (այսուհետ՝ նախարարություն) ամփոփել է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի մասնակցային բյուջետավորման ընթացակարգերով ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ **2026թ.** պետական բյուջեից սուբվենցիայի ստացման թվով երեք ծրագրային հայտերի («Արտաբույնք բնակավայրի մանկական խաղահրապարակի գնում և փոքրիկ զբոսայգու ստեղծում» ծրագիր, «Բետոնե հենապատերի կառուցում Քարագլուխ և Շատին բնակավայրերում» ծրագիր և «Երիտասարդական կենտրոնի ստեղծում Աղնջաձոր բնակավայրում և մշակույթի տան վերանորոգում Թառաթումբ բնակավայրում» ծրագիր) վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության և համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմինների ներկայացրած դիրքորոշումները և եզրակացնում է, որ հայտերը կազմված են՝ վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան: Հաշվի առնելով նշյալ

որոշման հավելվածի 26-րդ կետի 1-ին ենթակետը՝ սույն գրությամբ նախարարությունը ծանուցում է «Արտաբույնք բնակավայրի մանկական խաղահրապարակի զինում և փոքրիկ զբոսայգու ստեղծում» ծրագրի, «Բետոնե հենապատերի կառուցում Քարագլուխ և Շատին բնակավայրերում» ծրագրի և «Երիտասարդական կենտրոնի ստեղծում Աղնջաձոր բնակավայրում և մշակույթի տան վերանորոգում Թառաթումբ բնակավայրում» ծրագրի հայտերին համաձայնություն տալու մասին:

Միաժամանակ, նկատի ունենալով նաև հիշյալ որոշման հավելվածի 30-րդ կետում նախանշված կարգավորումը՝ առաջարկում ենք հայտին համաձայնություն տալու մասին ծանուցումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն հրապարակել համայնքի պաշտոնական կայքում:

Առդիր՝ էլ.նյութ:

Ստորագրող
ԱՎԵՏԻՔ ԴԱՐԲԻՆՅԱՆ
1302860062

2026-03-25 09:11:12 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքով՝

Ա.Դարբինյան

Կատարող՝ Համայնքային բյուջեների բաժնի գլխավոր մասնագետ, Խ.Պետրոսյան
Հեռ.010511369